ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 10, 1961 Общественные науки

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Ա. Ս. Համբարյան

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲՈՆԱԳՐԱՎԱՄ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՑԱՐԻԶՄԻ ԿՈՂՄԻՑ 1903—1905 ԹԹ.

Ով քիչ թե շատ գրել է Հայաստանում 20-րդ դարի սկզբին տեղի ունեցած ռևոլյուցիոն շարժումների մասին, նա այսպես թե այնպես անդրադարձել է 1903 թ. ցարիզմի կողմից հայոց եկեղեցու գույքի բռնագրավման հարցին և մատնանշել այն հանրահայտնի փաստերը, որ ցարիզմի այդ քայլը նրա ռուսիֆիկատորական քաղաքականության արտահայտություններից մեկն էր, որն ինչպես Հայաստանում, այնպես էլ Անդրկովկասի հայաբնակ վայրերում առաջ բերեց մասսայական ըմբոստություններ։ Թիֆլիսում, Բաքվում, Երևանում, Ալեքսանդրապոլում, Գանձակում ու այլ քաղաքներում, ինչպես և բազմաթիվ գյուղական վայրերում տեղի ունեցան մասսայական ցույցեր, որոնց մասնակցում էին հայ հասարակության տարբեր շերտերը, իրենց տարբեր նպատակներով. հայ հոգևորականությունը ձգտում էր եկեղեցու ունեցվածքը պահել իր ձեռքում՝ աշխատավորության հարստահարումը շարունակելու համար, բուրժուազիան ուզում էր ավելի շահավետ պայմաններով օգտվել նրանից (պատահական չէ, որ կապալառուները, ինչպես կտեսնենք ստորև, կանգ չառնելով ժողովրդի կողմից եկող ահ ու սարսափի առաջ, ոչ միայն մասնակցում էին կալվածքների գրանցման ու հանձնման ակտին, այլև համաձայնվում էին վարձակալել դրանք), իսկ ռևոլյուցիոն պրոլետարիատն ու գյուղացիությունը, որոնք հանդիսանում էին շարժման հիմնական ուժերը, պայքարելով ինքնակալության դեմ, ձգտում էին եկեղեցու գույքը ծառայեցնել իրենց շահերին։

Քաղաքական պարտիաները, ելնելով իրենց դասակարգային շահերից, ցարիզմի կողմից եկեղեցական գույքի բռնագրավման փաստը օգտագործում էին հակառակ դիրքերից. հայ բուրժուազիան, հատկապես դաշնակցական պարտիան օգտագործում էր այն ռուս և հայ ժողովրդի միջև թշնամություն սերմանելու համար, սոցիալ-դեմոկրատիան, ընդհակառակը, ձգտում էր միաձուլել հայ ժողովրդի հակացարական ելույթը ռուսական ռևոլյուցիոն շարժման հետ և այն ուղղել ընդդեմ տիրապետող կարգերի։ 1903 թ. «Իսկրան» Բ. Կնունյանցի հոդվածի[1] առթիվ գրում էր. «...Մենք պահանջում ենք եկեղեցական ունեցվածքի բռնագրավում ժողովրդական (դեմոկրատական) կառավարության կողմից՝ հօգուտ ժողովրդի, բայց ոչ ոստիկանական կառավարության կողմից՝ հօգուտ ոստիկանության»[2]։ Սոցիալ-դեմոկրատիան ագիտացիա էր մղում, որ հայերը եկեղեցական ունեցվածքը ծառայեցնեին «ոչ թե եկեղեցական կարիք-

[1] *Տես՝* Б. Н. Кнунянц. Избранные произведения. Ереван, 1958, «Новый разбой» *հոդվածը։*

[2] *«Իսկրա», 1903, 1(14) հոկտեմբերի, № 49։*

ների, այլ ժողովրդի կարիքների համար, հարկային ճնշման թեթևացմանը, բանվորների աշխատանքային պայմանների բարելավմանը, ազատության համար մղվող պայքարի պաշտպանությանը»[3]։

«Իսկրան» այնուհետև շարունակում էր. «Մենք կհամախմբենք հայ պրոլետարիատին իրար հետ և ռուս բանվորների հետ՝ նրանց բոլոր ունեզրկողներին ունեզրկելու համար։ Բայց ոստիկանական բռնություններից մենք պետք է պաշտպանենք և կպաշտպանենք ոչ միայն պրոլետարներին, այլ հասարակության բոլոր դասակարգերին, այդ թվում նույնիսկ տերտերներին։ Հանուն միությունների ազատության և ինքնորոշման ազատության, մենք պահանջում ենք, որպեսզի ցարական կառավարությունը չհամարձակվի ձեռք բարձրացնել հայոց եկեղեցական ունեցվածքի վրա»[4]։

Այս հանրահայտնի դրույթները կրկնելով հանդերձ, մասնագետներից, սակայն, ոչ ոք մինչև այժմ չի պարզել այն հարցը, թե ցարիզմը ի՞նչ է բռնագրավել հայ եկեղեցուց և ինչպես է օգտագործել այն իր տրամադրության տակ գտնվող ժամանակաշրջանում։ Մինչդեռ այդ հարցի լուսաբանումը կարևոր է թե քաղաքական և թե դիտական տեսակետից։ Ծանոթ չլինելով պատմական անցյալին, որոշ մարդիկ նույնիսկ տրամադիր են ցարիզմի այդ քաղաքականությունը դիտելու որպես պրոգրեսիվ երևույթ։

Ցարիզմը, ինչպես հայտնի է, հայոց եկեղեցու ունեցվածքը բռնագրավեց 1903 թ. հունիսի 12-ի օրենքով։ Բռնագրավումից առաջ ներքին գործերի և հողագործության ու պետական ունեցվածքի մինիստրությունները մշակել էին համապատասխան պլան, որի հակիրճ բովանդակությունը հետևյալն է.

1. Բռնագրավել հայոց եկեղեցական այգիները, վարելահողը, մարգագետինները, արոտավայրերը, անտառները, առևտրական կրպակները, ջրաղացները, արհեստավորական հաստատությունները, ձկնորսական կետերը, բալնիքները, դրամական ունեցվածքը և այլն։

2. Գույքի ընդունումը հանձնարարել հողագործության ու պետական ունեցվածքի մինիստրությանը, Կովկասի գլխավոր կառավարչապետին և համապատասխան նահանգապետներին ու քաղաքագլուխներին։

3. Գույքի բռնագրավումը սկսել մեծ կալվածքներից և ավարտել փոքրերով ու փոքրագույններով։

4. Գույքի, այսպես կոչված, ընդունման ժամանակ պետք է ներկա լիներ գյուղապետը և քահանան։

5. Եթե գույքը տրված է վարձակալությամբ, ապա նրա վճարը անհրաժեշտ է տալ պետությանը։

6. Բռնագրավման ենթակա չեն՝ Պետերբուրգում և Մոսկվայում գտնվող գույքը, այն տարածությունները, որոնք պատկանում էին հոգևորականներին, հոգևոր-կրթական հաստատություններին (բայց երեք դեսյատինից ոչ ավելի), որոնց վրա կառուցված էին վանքեր ու եկեղեցիներ կամ որոնք հատկացված էին գերեզմանոցներին։ Բացի դրանից, բռնագրավման ենթակա չէին նաև անասուններն ու գյուղատնտեսական գործիքները։

Գործելով այս պլանով, իշխանության վերոհիշյալ ներկայացուցիչները մինչև 1903 թ. վերջը հիմնականում ավարտեցին հայոց եկեղեցական գույքի

---

3 Նույն տեղում։

4 Նույն տեղում։

բռնագրավումը։ Ըստ հողագործության և պետական ունեցվածքի մինիստր Ա. Երմոլովի բերած տվյալների, Ռուսաստանի, այդ թվում նաև Անդրկովկասի ներքոհիշյալ նահանգներում բռնագրավվեց հետևյալ գույքը[5]։

Նահանգներ ու մարզեր	Հողային հասութաբեր հոդվածների թիվը	Տարածությունը (դեսյատիններով)	Ոչ հողային հասութաբեր հոդվածների թիվը	1904 թ. ունեցվածքից ստացած եկամուտը (ռուբլիներով)
Տավրիդյան	7	4.011	35	22.264
Խերսոնի	—	—	14	2.804
Բեսարաբիայի	տեղեկություններ չկան			27.163
Դոնի մարզ	3	472	19	5,654
Աստրախանի նահանգ	1	60	21	4.000
Թիֆլիսի նահանգ	36	20.956	293	99.581
Զաքաթալայի օկրուգ	—	—	5	160
Երևանի նահանգ	111	34.486	397	62.267
Կարսի մարզ	2	692	8	
Ելիզավետպոլի նահանգ	36	83.677	76	22.569
Բաքվի նահանգ	8	238	49	1.430
Բաթումի մարզ	տեղեկություններ չկան			144
Սնծովյան նահանգ	1	1	2	1.309
Թերեքի մարզ	5	12	4	1.250
Ընդամենը	210	144.605	923	250.595

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ աղյուսակում բերված տվյալները թերի են։ Հողագործության և պետական ունեցվածքի մինիստրության դեպարտամենտներից մեկում հայոց եկեղեցական բռնագրաված գույքի ցուցակը կազմելիս նշում էին, որ «տեղեկություններն ինչպես գույքի, նույնպես և նրա տված եկամուտի մասին, որոնք հավաքված են հանձնաժողովի անդամների կողմից, բավականաչափ լրիվ չեն և հեռու են ճշգրտությունից»[6]։

Այդուհանդերձ աղյուսակը ցույց է տալիս, որ ցարիզմը հայոց եկեղեցուց բռնագրավել էր զգալի ունեցվածք՝ հողային 210 հասութաբեր հոդված 144.605 դես. տարածությամբ և 923 ոչ հողային հասութաբեր հոդված։ Բացի դրանից, նա բռնագրավել էր նաև 1.775.805 ռուբ. 35 կոպ. կանխիկ դրամ[7]։

Մասնագետները եկեղեցական գույքի բռնագրավման մասին խոսելիս, սովորաբար բավարարվում են այն իրական փաստի մատնանշումով, որ ցարիզմը դրանով իսկ ուզում էր զրկել հայոց դպրոցները և կուլտուրական այլ հաստատությունները նյութական աղբյուրներից, փակել դրանք և այդպիսով անցկացնել իր ռուսիֆիկատորական, շովինիստական քաղաքականությունը։

---

5 Տես՝ Центральный государственный исторический архив в Ленинграде (ЦГИАЛ), ф. 1276, оп. 19, д. 2, л. 35.

6 Նույն տեղում, թ. 25։

7 Նույն տեղում, թ. 12.

Դա, իհարկե, հարցի մի կողմն էր։ Նրանք մոռանում են նշել նրա ոչ քիչ կարևոր մյուս կողմը, այն, որ ցարիզմը միաժամանակ ձգտում էր իրագործել իր դաղութակալական քաղաքականությունը՝ ուզում էր բռնագրաված հողերի վրա բնակեցնել ռուս գաղթականներին, անտեսելով տեղական գյուղացիների սոսկալի սակավահողությունը։ Օրինակ, Կովկասի փոխարքան 1905 թ. հուլիսին գրում էր, որ ըստ Գոլիցինի հաշվումների, հայ եկեղեցին միայն Անդրկովկասում ունի մոտ 170 հազար դես. հող, որոնք «մեծ ի մասամբ պատկանելով պիտանի հողերի կարգին, կընդարձակեն պետական ազատ հողերի անբավարար պաշարը և կծառայեն ռուսական գաղութացման նպատակներին՝ հատկապես այն շրջաններում, որտեղ այդպիսի հողերը քիչ են և որտեղ այդ գաղութացումը ավելի քան այլ տեղում անհրաժեշտ է»[8]։

Սակայն ցարիզմը, բռնագրավելով հայ եկեղեցական կալվածքները, չկարողացավ իրագործել իր գաղութակալական նպատակները։ Երկրում սկիզբ առած և օրըստօրե ծավալվող ռևոլյուցիոն շարժումները ստիպեցին նրան առժամանակ մոռանալ ամեն մի գաղութակալական ձգտում և անցկացնել որոշ բարենորոգումներ, որը նա, թեև խոսքով, այնուամենայնիվ կատարեց 1905 թ.։

Եկեղեցու գույքը բռնագրավելուց հետո ցարիզմը հողային կալվածքները և ոչ հողային հասութաբեր հոդվածները հանձնեց հողագործության և պետական ունեցվածքի մինիստրությանը, իսկ դրամական միջոցները՝ ներքին գործերի մինիստրությանը։ Հողային կալվածքները և ոչ հողային հասութաբեր հոդվածները սկզբում տնօրինում էր Էջմիածնի գավառի պետական ունեցվածքի վերակացու Բադրիձեն, բայց, երբ սա բնակչության կողմից ուղարկված բազմաթիվ նամակների ազդեցության տակ (որոնցում նրան սպառնում էին սպանությամբ, եթե գույքը չվերադարձնի եկեղեցուն) հիվանդացավ նյարդերի խանգարումով և հրաժարվեց, այն ժամանակ կալվածքների տնօրինումը շարունակեց նրա տեղակալ Շոշինը։

Ցարիզմը եկեղեցական գույքի շահագործման եղանակների մեջ ոչ մի փոփոխություն չմտցրեց և եկեղեցու նման շարունակեց այն տալ վարձակալությամբ. բնորոշ է, որ հայ առևտրա-վաշխառուական բուրժուազիան, որը հանդիսանում էր եկեղեցական գույքի հիմնական վարձակալողը, օգտագործելով ցարիզմի և հայ աշխատավորության միջև մղված դասակարգային պայքարը, ձգտում էր էժանագին վերցնել այն, իսկ հաճախ էլ, վախենալով ժողովրդական մասսաների զայրույթից, ուղղակի հրաժարվում էր։ Բերենք կոնկրետ փաստեր։

Հայ եկեղեցին ուներ 177 առևտրական կրպակ, որոնք տալիս էր վարձակալությամբ սովորաբար աճուրդով։ Երբ տեղական իշխանությունները գույքը բռնագրավելուց հետո փորձեցին նույնը կատարել, ոչ ոք չներկայացավ։ Բադրիձեն առաջարկեց նախկին կապալառուներին՝ շարունակել կրպակների վարձակալումը նախկին պայմաններով, բայց նրանք նույնպես չհամարձակվեցին. փորձեց կանչել նրանց բոլորին միասին Էջմիածին և համոզել, սակայն, ապարդյուն։ Նախկին կապալառուները միայն այն ժամանակ վերցրին կրպակները, երբ Բադրիձեն ստիպված եղավ մի քանի անգամ էժան տալ առաջվա գներից և պայմանագիր չկնքել նրանց հետ։ Ուշագրավ է, որ իշխանությունը-

8 Նույն տեղում, թ. 51։

ները այդ զիջումներից հետո էլ կրպակների մի մասը չկարողացան տալ վարձակալությամբ։ Ցարական պաշտոնյաներից մեկի զեկուցագրում այդ առթիվ նշվում էր. «Համառ համոզումներից հետո նախկին վարձակալներից մի քանիսը համաձայնվեցին վարձակալել կրպակները, բայց մյուս մասը բոլորովին հրաժարվեց վերակացուի առաջարկությունից, հայտարարելով, որ իրենք չեն ցանկանում մնալ վանական կրպակներում և շարունակել առևտուրը»[9]։

Ցարական իշխանությունները լուրջ դժվարության հանդիպեցին նաև վարելահողերը վարձակալության տալու ժամանակ, հողեր, որոնք առաջ ցանկացողները իրար ձեռքից էին խլում։ Վերոհիշյալ զեկուցագրում նշվում էր, որ այս հարցում «հարկ եղավ նույնպես պայքարել հայերի բացահայտ և համառ չցանկանալու հետ»[10]։ Իշխանությունները երեք ամսվա ընթացքում (1904 թ. հունվարից մինչև մարտի վերջերը) չկարողացան վարելահողերից անգամ մի դեսյատին տալ վարձակալությամբ։ Ոսկ ով ուզում էր վերցնել, նրան վիրավորում կամ սպանում էին որպես դավաճանի։ Օրինակ՝ Գեղամով Ստեփան ազգանունով մեկը մոտենում է վերակացուին և խնդրում, որ նա բռնագրաված հողերից երկու հողամաս տա վարձակալությամբ և ավելացնում, որ եթե այդ հնարավոր չի առանց աճուրդի, ապա պատրաստ է վերցնել աճուրդով։ Վերակացուն, որն այդ ժամանակ տուն էր գնում, առաջարկում է նրան հետո անցնել գրասենյակ՝ պայմանների մասին ավելի հանգամանորեն խոսելու համար, բայց հազիվ էր մոտեցել իր տանը, երբ լսեց, որ Գեղամովը խանչալի հարվածներից արդեն սպանվել է[11]։

Կովկասի հողագործության և պետական ունեցվածքի պետը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարելահողերի մշակումը պետք է անպայման սկսել մարտին, առաջարկեց վերակացուին՝ դիմել ամեն մի միջոցի՝ վարձակալողներ գտնելու համար։ Վերջինս ընկավ գյուղից-գյուղ, գնաց հատկապես այն գյուղերը, որտեղ բնակվում էին նախկին կապալառուները, խոսեց նրանց հետ, բայց ապարդյուն, ոչ ոք չհամաձայնվեց։ Վերակացուն վարձակալական գները խիստ իջեցնելուց հետո, վերջապես, Սամաղար գյուղում, մարտի վերջերին, գտավ մի հարուստ հայ՝ Սարգիսով Զոհրաբ անունով և մի ադրբեջանցի, որոնք համաձայնվեցին վերցնել վարելահողերից վեց հողամաս։ Ցարական պաշտոնյաներից մեկը գրում էր. «Խստորեն արտահայտված՝ այն ժամանակ այդ հողամասերը ոչ թե վարձակալությամբ տրվեցին նշված անձանց, այլ ուղղակի փաթաթվեցին նրանց վիզը և, բնական է, միանգամայն անշահավետ գներով»[12]։ Օրինակ՝ «Զամիչ» անունով արգավանդ հողամասը, որը 146 դեսյատին էր, վանքը տալիս էր 2190 ռուբլով, 1904 թ. տվեց 366 ռուբլով[13]։ Վերակացուն նման զիջումներով կարողացավ վարձակալությամբ տալ վարելահողերի նաև մնացած մասերը։

Խաղողի այգիներն ապրիլ ամսին պետք էր անպայման բաց անել, այլապես նրանք ոչ միայն մի կոպեկի եկամուտ չէին տա, այլ նաև կփչանային։ Հաշվի առնելով այդ հանգամանքը, Կովկասի հողագործության և պետական

9 Նույն տեղում, թ. 5։
10 Նույն տեղում, թ. 6։
11 Նույն տեղում, թ. 20։
12 Նույն տեղում, թ. 6։
13 Նույն տեղում։

ունեցվածքի կառավարչությունը որոշում ընդունեց ինչ գնով էլ լինի, ստիպել այգիների նախկին կապալառուներին շարունակելու վարձակալումը։ Կառավարչությունը այդ ուղղությամբ հաջողությունների հասավ Աշտարակում և Օշականում, իսկ Էջմիածնում՝ ոչ։ Կապալառուներն այստեղ կտրականապես հրաժարվեցին այգիների վարձակալումից։ Վերակացուն երկար փնտրելուց հետո, վերջապես Երևանում գտավ երկու հոգի, որոնք համաձայնվեցին իրենց համար միանգամայն շահավետ պայմաններով վերցնել Էջմիածնի խաղողի այգիները։

Ցարական իշխանությունները հասութաբեր հողվածների հետ մեկտեղ, վանքի օրինակով, սկսեցին վարձակալությամբ տալ նաև վանքապատկան գյուղացիներից գանձվող մուքը։ Նրանք հայտարարեցին աճուրդ, բայց արձագանքողներ չեղան։ Ա. Երմոլովն իր զեկուցագրում հիշատակում էր. «Ցնցած աճուրդն իր ժամանակին կազմակերպելուն և այդ մասին բոլոր շահագրգրված մարդկանց տեղեկացնելուն, այնուամենայնիվ վանքապատկան գյուղացիներից հավաքվող մուքը վարձակալողներ չգտնվեցին, ոչ ոք չներկայացավ աճուրդի։ Վերակացուի գործադրած ջանքերը այդ ուղղությամբ նույնպես չպսակվեցին հաջողությամբ, նախկին վարձակալներից ոչ մեկը լսել անգամ չէր ուզում վանքապատկան գյուղերի մուքը վարձակալելու մասին»[14]։

Կառավարչությունը որոշեց հանձնարարել վերակացուներին՝ մուքը հավաքելու համար մարդիկ վարձել։ Բայց վերակացուները, չնայած առաջարկում էին չափազանց բարձր վճարումներ, այնուամենայնիվ ոչ ոքի չգտան. մարդիկ վախենում էին վտանգի ենթարկել իրենց կյանքը։ Վերակացուներից մեկը Երևանում վերջապես գտավ երեք իմերեթցի, որոնք համաձայնվեցին վարձվել, սակայն երեք օր լինելով Էջմիածնում և անընդհատ ընդհարվելով գյուղացիների հետ, չկարողացան որևէ բան հավաքել և, հրաժարվելով իրենց վերցրած պարտականությունից, ստիպված թողին ու հեռացան։

Այն ժամանակ կառավարչությունը դիմեց տեղական ղորքերի օգնությանը. հրամանատարությունը սիրով համաձայնվեց։ Բաղրիձեն, վերցնելով որոշ թվով զինվորներ, ուզեց գնալ Եղվարդ, բայց մեկնելու նախօրյակին ստանալով անստորագիր նամակ, որով սպառնում էին նրան սպանությամբ, եթե կհամարձակվի այդ նպատակով տեղից շարժվել, ետ կանգնեց։ Նրա փոխարեն ուղարկվեց Ֆոմիչևը։ Սակայն սա ճանապարհի կեսին հիվանդացավ և հետ վերադարձավ։ Այն ժամանակ ուղարկվեց գործերի կառավարչի ավագ օգնական Գուդինը։ Սա Եղվարդում գյուղացիներից պահանջեց վճարել մուքը, բայց գյուղացիները միաբերան հրաժարվեցին։ Մի հաղորդման մեջ ասվում է. «Պայքարել ընդդեմ այդ չարիքի, ապարդյուն էր, քանի որ պետք էր պայքարել ոչ թե առանձին չարակամ անձանց, այլ ողջ բնակչության հետ։ Չխոսելով այն վիրավորանքների մասին, որոնք ամեն քայլափոխում հասցվում էին վերակացուին և զինվորներին, հայերը մուքի հավաքման ժամանակ ցուցաբերեցին նույնիսկ բացահայտ դիմադրություն»[15]։ Այդպիսի դիմադրություն գյուղացիները ցուցաբերում էին ոչ միայն Եղվարդում, այլ նաև վանքապատկան մյուս գյուղերում։ Օրինակ՝ Օշականում Հովսեփ Աֆրկիովը խփեց զինվոր Իվան Վելոյի երեսին, Եղվարդում գյուղացիները մի լավ ծեծեցին ոստիկան Շեկատու-

14 Նույն տեղում, թ. 9։
15 Նույն տեղում, էջ 14։

րյանին, իսկ զինվորներին սկըրում փայտով խփեցին, իսկ հետո քարեր շպրտեցին նրանց վրա։ «Այդպիսի ամենօրյա փաստեր,—կարդում ենք Ա. Երմոլովի զեկուցագրում,—տեղի էին ունենում նաև մնացած բոլոր գյուղերում և անիմաստ էր պայքարել նրանց դեմ՝ առանց ոստիկանական իշխանության ակտիվ միջամտության։ Բանը հասնում էր այնտեղ, որ գյուղացիները, չքաշվելով պաշտոնյայի կամ հարկահանի ներկայությունից, սպառնում էին սպանել զինվորներին կամ պահակներին, եթե վերջիններս կհամարձակվեին մատնել իրենց գողությունը (խոսքն այն մասին էր, երբ գյուղացիներն իրենց բերքը տուն էին տանում առանց տասանորդը վճարելու—Ա. Հ.)։ Վերջապես, նույնիսկ այն դեպքում, երբ համարյա մարտերով հաջողվում էր վերցնել տասանորդը, տեղափոխողները, այսինքն՝ իրենք գյուղացիները ճանապարհին ձգտում էին թափել հացահատիկը, միայն թե այն չմտներ պետական գանձարանը»[16]։

Ուշագրավ է նշել հետևյալ հանգամանքը, սահմանված կարգի համաձայն, եթե ցերեկը քամի չէր լինում, գյուղացիները կարող էին բերքը էրնել գիշերը։ Օգտվելով այդ բանից, նրանք էրնումը հետաձգում էին գիշերը և հանած բերքը գաղտագողի տուն տանում։ Երբ իշխանությունները փորձեցին հսկել, գյուղացիները կամ թաքնվում էին գիշերային խավարի մեջ, կամ սպառնում պահակներին լռել, եթե ոչ կսպանեն։ Եվ պահակներն ու հարկահանները, վախենալով գյուղացիների սպառնալիքներից, հաճախ խուսափում էին նրանցից։ Իշխանությունները, տեսնելով իրերի նման վիճակը, փորձեցին հանձնարարել այդ հսկումը գյուղապետներին, սակայն սրանք վախենալով գյուղացիներից, հրաժարվեցին։

Ցարական կառավարությունը բամբակի բերքը, համեմատած հացահատիկի հետ, շատ հավաքեց, բայց այն հավաքեց նույնպես դասակարգային կատաղի պայքարի պայմաններում։ Օրինակ՝ Օշականում գյուղապետի օգնականը, երբ պահանջեց գյուղացիներից վճարել բամբակի մուլքը, նրանցից մեկը խփեց նրա երեսին, իսկ մյուսը շպրտեց գլխարկը։ Գյուղապետը դժվարությամբ կարողացավ ազատել իր օգնականին նրանց ձեռքից։ Ականատեսներից մեկը գրում էր, որ այդ գյուղում բամբակի մուլքի հավաքումը հաջորդ օրը նույնպես անհաջող էր ընթանում, հարկահանները ամբողջ օրվա ընթացքում կարողացան հավաքել միայն 8 հոգուց[17]։ Երբ գյուղացիներն իմացան, որ իշխանությունները այնուամենայնիվ բամբակի մուլքը հավաքել են ավելի շատ, քան սովորական տարիները, հավաքվեցին խորհրդակցության և որոշեցին կտրականապես հրաժարվել այսուհետև որևէ մուլք վճարելուց։

Ցարական իշխանությունները մեծ դիմադրության հանդիպեցին նաև ծխահարկը հավաքելու ժամանակ, որը, ինչպես հայտնի է, գյուղացիները վճարում էին դրամով։ Նրանք կարողացան հավաքել այն տեղական ոչ միայն ոստիկանական, այլ նաև զինվորական ուժերի օգնությամբ։

Իշխանությունների համար որքան դժվար էր մուլքի հավաքումը, համարյա նույնքան էլ դժվար էր նրա վաճառումը։ Նրանք համեմատաբար հեշտությամբ վաճառեցին միայն բամբակը. այն վաճառեցին Երևանում հաստատված ռուսական մանուֆակտուրային ֆիրմաների ներկայացուցիչներին, իսկ մնացած

---

16 Նույն տեղում, էջ 14։

17 Նույն տեղում, էջ 19։

արդյունքները վաճառեցին մեծ դժվարությամբ։ Օրինակ, երբ իշխանությունները ցանկացան վաճառել ցորենը, ոչ ոք չներկայացավ դնելու. առաջարկեցին նախկին գնորդներին, սրանք նույնպես հրաժարվեցին։ Երևանից մի ադրբեջանցի պատրաստակամություն հայտնեց, սակայն նրան սպառնացին սպանությամբ և նա հրաժարվեց այդ մտքից։ Իշխանությունները կանչեցին հացի առևտրով զբաղվող մի քանի վաճառականների և առաջարկեցին դնել մուլքցորենը։ Բայց նրանցից մի մասը հրաժարվեց, մյուսը խալվարին տվեց 27 ռուբլի, այն դեպքում, երբ էջմիածնի շուկայում վաճառվում էր 38—40 ռուբլով։ Նրանք, վերջապես վաճառեցին ցորենը երկու ադրբեջանցու՝ խալվարը 31 ռուբլով։ Բնորոշ է նշել, որ այդ ադրբեջանցիները տեռորից խուսափելու համար, իրենց գնած ցորենը էջմիածնից տեղափոխեցին Երևան, գիշերվա ժամը 12—1-ին, այն էլ ոչ թե խճուղով, այլ արահետներով։

Համարյա նույն բանը տեղի ունեցավ նաև առվույտը վաճառելու ժամանակ։ Իշխանությունները երբ հայտարարեցին նրա վաճառքի մասին, ոչ ոք չներկայացավ գնելու։ Նրանք որոշեցին տեղափոխել այն Երևան և այնտեղ վաճառել, բայց չգտան փոխադրական միջոցներ։ Ա. Երմոլովը այդ առթիվ գրում էր. «Չնայած այն բանին, որ առաջարկվեց բավականաչափ բարձր վճարումներ առվույտը Վաղարշապատից Երևան տեղափոխելու համար, այնուամենայնիվ ոչ միայն այդ (իմա Վաղարշապատ) գյուղից, այլև շրջապատի գյուղերի բնակիչներից ոչ ոք ոչ մի գնով չհամաձայնվեց»[18]։

Այդ ամենի հետևանքով ցարական իշխանությունը անհամեմատ ավելի քիչ եկամուտ ստացավ, քան ստանում էր վանքը՝ վանքապատկան կալվածքներից։ Օրինակ, վանքը տարեկան ստանում էր շուրջ 300.000, իսկ իշխանությունները 1904 թ. ստացան 188.710 ռուբլու եկամուտ, այսինքն՝ 111.290 ռուբլով պակաս[19]։ Իշխանություններն այդ եկամուտը կարողացան ստանալ բռնության՝ գյուղացիներին ծեծի, աքսորի ու գնդակահարության ենթարկելու միջոցներով։ Նրանց բարբարոսական գործունեության հետևանքով հարյուրավոր մարդիկ աքսորվեցին, սպանվեցին ու ընտանիքներ որբ մնացին։

Սակայն ցարիզմի այդ քաղաքականությունը ոչ միայն չընկճեց հայ ժողովրդի կամքը, այլ ավելի բազմապատկեց նրա եռանդը ազատագրական պայքարում։ Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը ստիպված էր խոստովանել, որ «վերջին երկու տասնամյակների ընթացքում հայ եկեղեցու և բնակչության նկատմամբ պարբերաբար կիրառվող ռեպրեսիվ միջոցառումները, որոնք ավարտվեցին դպրոցների փակումով, եկեղեցական ունեցվածքի բռնագրավումով և պետական տնօրինության հանձնելով, հայ եկեղեցու և բնակչության մեջ առաջ բերեցին ընդհանուր դժգոհություն և ծայրերկրում ստեղծվեց տագնապալի կացություն»[20]։

Այդ տագնապալի կացությունը վերացնելու, կառավարության հեղինակությունը փրկելու համար նա անհրաժեշտ էր համարում վերադարձնել բռնագրավված գույքը և դադարեցնել ռեպրեսիաները հայերի նկատմամբ։ Վորոնցով-Դաշկովը գրում էր. «Հայերի տրամադրության մեջ արդեն նկատվում են անհամբերության նշաններ։ Անհրաժեշտ է իր ժամանակին գործադրվող միջոց-

18 Նույն տեղում, էջ 21։
19 Նույն տեղում, էջ 23։
20 Նույն տեղում, թ. 10։

ներով կանխել բնակչության կողմից հնարավոր բռնկումները, որպեսզի թույլ չտան նրան կարծելու, թե բոլոր բարենորոգումները մտցվում են միայն անկարգությունների ճնշման տակ»[21]։

1905 թ. օգոստոսի 1-ին ցարը, Կովկասի փոխարքայի միջնորդությամբ, օրենք հրատարակեց հայոց եկեղեցական բռնագրված գույքը և նրանից 1903—1905 թթ. ընթացքում ստացած եկամուտները վերադարձնելու մասին։ Այդ օրենքը, իհարկե, չբավարարեց հայ աշխատավորների պահանջները, նրանք շարունակեցին իրենց պայքարը ընդդեմ ցարիզմի նաև հետագա տարիներին։

Ուշագրավ է բերել հետևյալ տվյալները. 1903—1904 թթ. ընթացքում եկեղեցական գույքը բռնագրավելու և հարկեր ու տուրքեր գանձելու ժամանակ ցարական պաշտոնյաներից սպանվել են.

1. Փոխնահանգապետ Անդրեևը
2. Կարսի ժանդարմական վարչության թարգմանիչ Գրոզդևը
3. Ալեքսանդրապոլի ոստիկանական կատարածու Նիշչենսկին
4. Շրջիկ ձիավորներ (объездчики) Սավինն ու Գոնչարենկոն
5. Սուրմալուի գավառի գավառապետ Բոգոսլավսկին
6. Ոստիկանական կատարածու Գուլիելին
7. Սահմանային պահակախմբի գնդապետ Բիկովը
8. Հարկահան Շչերբակովը
9. Պոլտավյան գնդի կազակային հարյուրապետը
10. Էջմիածնի գյուղապետը
11. Հաշտարար միջնորդ իշխան Նակաշիձեն

Վիրավորվել են

1. Էջմիածնի գավառապետ Շմերլինգը
2. Անտառների վերահսկիչ Կոմարևիչը
3. Գավառապետի օգնական Նեվիննսկին։

Սրանով, իհարկե, ամենևին էլ չեն վերջանում ցարիզմի այն սատրապների անունները, որոնց համաժողովրդական հեղեղն իրավամբ ոտնատակ արեց։ Ա. Երմոլովը Մինիստրների խորհրդին ներկայացրած իր զեկուցագրում փորձում էր բանն այնպես ներկայացնել, որ եկեղեցական գույքի բռնագրավման և ցարիզմի կողմից նրա օգտագործման ժամանակ առաջացած մասսայական շարժումների հրահրողները եղել են հայ հոգևորականությունն ու դաշնակցական «ռևոլյուցիոներները»։ Արդ՝ հնարավոր է, որ նրանք, ինչպես և քաղաքական այլ պարտիաներն ու խմբավորումները արել են որոշ բան, մանավանդ երբ նրանցից յուրաքանչյուրը, ինչպես ասվեց վերևում, ունեին իրենց հետին նպատակները։ Բայց 1903—1905 թթ. մասսայական շարժումները շատ տեղերում ինքնաբուխ էին՝ առաջացած ինքնակալության հակահայկական և գաղութային քաղաքականության հետևանքով։ Արդարև, միթե հայ գյուղացիները զգում էին որևէ հրահրման կարիք, երբ տեսնում էին, որ եկեղեցական գույքի բռնագրավումով փակվում են իրենց երեխաների դպրոցները, երբ գիտակցում էին, որ իշխանություններին հարկեր ու տուրքեր վճարելով սովահար են անում իրենց ու իրենց ընտանիքներին։ Բայց մյուս կողմից չպետք է կարծել, որ գյուղացիները ձգտում էին եկեղեցական հողատիրության պահպան-

21 Նույն տեղում։

մանն ու հավերժացմանը, ընդհակառակը, նրանք դարեր շարունակ պայքարել են նրա շահագործման դեմ ու շարունակում էին պայքարել նաև 20-րդ դարի սկզբներին։

Հայոց եկեղեցական հողատիրությունը միջնադարյան հողատիրություն էր։ Այն խանգարում էր ոչ միայն արտադրողական ուժերի և նոր, կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը, այլ նաև հիմք էր ծառայում աշխատավորությանը կապալային պայմաններով հարստահարելու, խավարի մեջ պահելու համար։ Այս առումով նրա գոյությունը ռեակցիոն էր, այն պետք էր բռնագրավվեր և ոչնչացվեր։ Բայց պատմական առաջընթացի տեսակետից նրա բռնագրավողը պետք է լիներ ոչ թե ցարիզմը, այլ պրոլետարիատն ու աշխատավոր գյուղացիությունը։ Ցարիզմի կողմից եկեղեցական ունեցվածքի բռնագրավումը հանդիսանում էր ամենառեակցիոնը, որովհետև ցարիզմը այդ ունեցվածքի օգտագործման եղանակների մեջ չէր մտցնում ոչ մի բարելավում, իսկ ստացած եկամուտները ծառայեցնում էր ռևոլյուցիոն շարժումները խեղդելու նպատակին։ Եկեղեցական ունեցվածքի բռնագրավումը գյուղացիության և պրոլետարիատի կողմից, ընդհակառակը, կնպաստեր արտադրողական ուժերի զարգացմանը, մեկ ընդմիշտ վերջ կդներ աշխատավորության որևէ ձևով շահագործմանը և լայն ուղիներ կբացեր նրա տնտեսական ու կուլտուրական զարգացման համար։ Ահա թե ինչու սոցիալ-դեմոկրատիան, ինչպես ասվեց վերևում, կոչ էր անում չսահմանափակվել եկեղեցական գույքի հետ ստացումով և հարցը լուծել արմատապես։